

**ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի
տեխնիկական առարկաների ամբիոնի վերաբերյալ տեղեկություններ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի ամբիոնը ներկայիս հաստիքակազմով ձևավորվել է 2011 թվականին:

2012 թվականից ամբիոնը ղեկավարում է ոստիկանության գնդապետ Մանուկ Ոսկանյանը (էլ. փոստ՝ mvoskanyan60@mail.ru):

Ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության փոխգնդապետ Գեղամ Կաջոյանը:

Ամբիոնի դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության մայոր Անժելա Տոնոյանը:

Ամբիոնի ուսումնական ասիստենտի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության կապիտան Գայանե Խաչատրյանը:

Ամբիոնի կաբինետի պետի պաշտոնը զբաղեցնում ոստիկանության մայոր Նունե Մխիթարյանը:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են կրթական, ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, ամբիոնի գործունեության ուղղվածությանը համապատասխան գիտական հետազոտությունների իրականացումը, ամբիոնի ուղղվածության ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, ուղեցույցներ և գիտաուսումնական այլ անհրաժեշտ նյութեր մշակելը, կրթահամալիրի կողմից իրականացվող կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացմանը նպաստելը:

2012-2018 թվականների ընթացքում ամբիոնի դասախոսական անձնակազմը հրատարակել է երու մասից բաղկացած 1 դասագիրք:

Ամբիոնի խնդիրներն են՝

- Ուսանողներին պատշաճ կերպով սովորեցնել ավտոմոբիլի կառուցվածք, շահագործումը քաղաքային և լեռնային պայմաններում, տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև մարտական մեքենաների կառուցվածքը, սպասարկումը, շահագործումը և հնարավորությունները արգելքների հաղթահարման ժամանակ (ջրային արգելքներ, հակատանկային խրամափոսեր) ,
- Ուսանողներին ծանոթացնել ոստիկանության սպառազինությունում գտնվող և օպերատիվ հետախուզական միջոցառումներում կիրառվող հատուկ, օպերատիվ և քրեագիտական տեխնիկայի ու կապի միջոցներին, դրանց դասկարգմանը, կառուցվածքին և օգտագործմանը, օգտագործման ժամանակ սահմանափակումներին, ինչպես նաև տեսադիտարկման և նավիգացիոն համակարգերին,

- Սովորողներին տալ գիտելիքներ ոստիկանությունում գործող համակարգչային ծրագրերի և համակարգերի ստեղծման ու կիրառության վրաբերալ,
- Ուսանողներին սովորեցնել ճանապարհային երթևեկության կանոնները, իսկ ֆակուլտատիվ ժամերին նրանց հետ անցկացնել ավտոմոբիլի ու մոտոցկլեյի գործնական վարման դասընթացներ,
- Սովորողներին տալ գիտելիքներ բնական գիտությունների հիմնարար գաղափարների ու սկզբունքների մասին, ծանոթացնել դրանց ժամանակակից կարևորագույն նվաճումներին, զարգացնել աշխատանքային կրթությունը ամբողջական պատկերացումները և մեծացնել բնության պահպանման խնդիրների մեջ մարդու վարքագծի դրսևորման պատասխանատվությունը:

Ամբիոնում դասավանդվող առարկաներն են՝

1. Մարտական մեքենաներ
2. Ավտոմոբիլային պատրաստականություն
3. Ճանապարհային երթևեկության կազմակերպում և անվտանգության ապահովում
4. Ճանապարհային երթևեկության կանոններ
5. Ոստիկանության ինֆորմացիոն-տեխնիկական սպասարկում
6. Համակազմից օգտվելու հմտություններ
7. Համակարգչային օպերատորության հիմունքներ
8. Հատուկ տեխնիկա և տեղեկատվական անվտանգություն
9. Հատուկ տեխնիկա
10. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաները
11. Ավտոմոբիլի և մոտոցկլեյի գործնական վարման դասընթացներ